ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

<< ՀՀՏՄ-ԳՀԱՊՁԲ-2024/01>> **ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ**

ք. Իջևան << 04 >> հուլիսի 2024թ.

Ժամը 17:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝ Մերուժան Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ՝ Աղաբեկ Գալստյան

Հանձնաժողովի անդամ՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ՝ Թինա Օթարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Աննա Մանգասարյան

ՀՀՏՄ-ԳՀԱՊՁԲ-2024/01 ծածկագրով <<Մանկապարտեզների կարիքների համար դաշնամուրների և օդափոխման համակարգերի>> ձեռքբերման մրցույթի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) հայտերը բացվել են էլեկտրոնային արմեպս համակարգով ս.թ. հուլիսի 4-ին ժամը 11:00-ին:

1. Տվյալներ մրցույթի մասնակիցների վերաբերյալ.

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	ՀՎՀՀ, էլ. հասցե	Չափաբաժնի համարը
1	Անուշ Դավթյան ԱՁ	23227666, ashkhen.bareyan@gmail.com	1

2. Տվյալներ մասնակիցների կողմից հրավերով պահանջվող փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ.
   1. Մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը Հրավերով սահմանված կարգով հաստատված չեն էլեկտրոնային ստորագրությամբ:
   2. Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1 (Առաջարկվող ապրանքի նկարագիր) -ում տեխնիկական բնութագիրը պատճենված է Հրավերում կցված տեխնիկական բնութագրից, հարց է առաջանում արդյոք մասնակցի կողմից ներկայացվող ապրանքի պարամետրերը ճիշտ նույնությամբ համընկնում են Հրավերի տեխնիկական բնութագրին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ **հաստատված** կարգի 41-րդ կետը՝ ՀՀՏՄ-ԳՀԱՊՁԲ-2024/01 ծածկագրով մրցույթի գնահատող **հանձնաժողովը** որոշեց.

1. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, վերոնշյալ անճշտությունների շտկման համար:
2. Մասնակիցը, եթե մեկ աշխատանքային օրում չշտկի անհամապատասխանությունները նրա հայտը ենթակա է մերժման:
3. Ծանուցումը ուղարկել մասնակցին հայտով նշված էլեկտրոնային հասցեին և արմեպս ծրագրով:
4. Հրավերի 2-րդ չափաբաժինը համարել չկայացած՝ հայտեր չլինելու պատճառով, և հրապարակել չկայացած ընթացակարգի մասին հայտարարություն:

Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա ս.թ. հուլիսի 9-ին ժամը 09:00-ին:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. **Հարությունյան**

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. **Գալստյան**

Թ. Օթարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանգասարյան